ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԱՏՎԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Մարտի 8-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լատվիայի Սաեյմայի (Խորհրդարան) նախագահ տիկին Ինգրիդա Ուդրեին և նրա գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ Աժ Գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հրանուշ Հակոբյանի և երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ:

Նորին Սրբությունը, ողջունելով Լատվիայի Խորհրդարանի նախագահի անդրանիկ այցը Ս. Էջմիածին, շնորհավորեց և լավագույն բարեմաղթանքներն ուղղեց նրան Կանանց միջազգային օրվա առիթով: Վեհափառ Հայրապետն ուրախություն հայտնեց, որ երկու երկրների համագործակցությունն ու հարաբերությունները զարգանում են նման բարձր մակարդակով՝ նշելով, որ երկու ժողովուրդների բարեկամությունը մշտապես առանձնահատուկ և ջերմ է եղել, ինչը դրսևորվել է նաև Արցախյան ազատագրական շարժման օրերին:

Հանդիպման ընթացքում խոսվեց Հայաստանում այս տարի նշվող Հայոց գրերի գյուտի 1600-ամյա հոբելյանի և Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի մասին: Վերջինի առնչությամբ Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ մայիսի 2-ին Լատվիայի Լյութերական Եկեղեցու կենտրոնական տաճարում մասնավոր արարողություն է անցկացվելու ի հիշատակ Մեծ եղեռնի զոհերի: «Հավատով և հուսով ենք լեցուն, որ Հայոց ցեղասպանությունը կճանաչվի և կդատապարտվի որպես մարդկության դեմ կատարված ոճրագործություն»,- ասաց Հայոց Հայրապետն իր խոսքում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաև իր գնահատանքն ու շնորհակալությունը հայտնեց Լատվիայի իշխանություններին՝ հայ ժողովրդի լատվիաբնակ զավակների նկատմամբ դրսևորած բարյացակամ վերաբերմունքի ու հոգածության համար:

Իր հերթին Լատվիայի Սաեյմայի նախագահ տիկ. Ուդրեն, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, անդրադարձավ երկու երկրների ու ժողովուրդների պատմական ընդհանրություններին և այսօրվա գործակցությանը:

Հանդիպմանը խոսվեց նաև երկու երկրներում տիրող կրոնական իրավիճակի, Հայ Առաքելական և Լյութերական Եկեղեցիների ներկայիս առաքելության, ինչպես նաև Եկեղեցի-պետություն հարաբերությունների մասին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԻՐԻԱՅԻ ԴԵՍՊԱՆ ԴՈԿՏ. ՂԱՍՍԱՆ ՌԱՍԼԱՆԻԻՆ

Մարտի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում իր դիվանագիտական առաքելությունն ավարտած Սիրիայի Արաբական Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար, դեսպան դոկտ. Ղասսան Ռասլանիին:

Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց դեսպանի աշխատանքը Հայաստանում և նրա բերած ավանդը երկու երկրների ու ժողովուրդների միջև հարաբերությունների զարգացման գործում: «Մեր սիրտը գոհունակությամբ է լցվում և իրապես մխիթարվում այն երևույթով, որ մեր բարեկամ երկու ժողովուրդները շարունակում են հարյուրամյակների եղբայրությունը՝ զորակից, աջակից և նեցուկ լինելով միմյանց: ...Մենք եղել ենք Սիրիայում և տեսել այն հոգատար վերաբերմունքը, որ դրսևորվում է մեր ժողովրդի զավակաց նկատմամբ իշխանությունների կողմից, տեսել ենք մեր ժողովրդի գոհունակ ու շնորհակալ ոգին հանդեպ Սիրիայի իշխանությունները»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում՝ իր բարեմաղթանքներն ուղղելով Սիրիայի իշխանություններին ու ժողովրդին:

Ամենայն Հայոց Հայրապետը նշեց նաև, որ սիրիաբնակ հայորդիները ցանկություն են հայտնել հայրենի հողում կառուցել արաբ ժողովրդին հայ ժողովրդի երախտագիտության հուշարձան՝ ի նշան հայ և արաբ ժողովուրդների բարեկամության:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ դոկտ. Ռասլանը վստահություն հայտնեց, որ երկու երկրների և ժողովուրդների միջև ձևավորված հարաբերություններն առավել կսերտանան և կխորանան: «Այս կարճ ժամանակահատվածը, որ անցկացրեցի այստեղ, մեծ տպավորություններ թողեց Ձեր երկրի և հայ ժողովրդի մասին, և այս հիշողությունները երկար պիտի ուղեկցեն ինձ»,- նշեց դեսպանն իր խոսքում:

Հրաժեշտից առաջ Հայոց Հայրապետը դեսպանին մաղթեց քաջառողջություն և նորանոր հաջողություններ հետագա առաքելության մեջ:

Հանդիպմանը ներկա էր Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ վարդապետ Նալբանդյանը: